ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/31

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ կադաստրի կոմիտե
Մասնակից՝ «Ալպեսա» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Ալպեսա» ՍՊԸ-ի տնօրեն՝ Պ. Քարամյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07» գնանշման հարցման ընթացակարգ, Կադաստրի կոմիտեի Նոր Նորքի 5-րդ զանգված Նիկոյան 7 հասցեում գտնվող մասնաշենքի ընթացիկ նորոգման աշխատանքների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1188-2021 գրությամբ «Ալպեսա» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կադաստրի կոմիտեի 20.01.2021թ. թիվ ԱԹ/383-2021 գրության հիման վրա, 01.02.2021թ.-ին «Ալպեսա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 01.02.2021թ.-ին:

Բողոքներ քննող անձի 02.02.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/31 համարի ծածկագիրը:

11.02.2021թ.-ին և 26.02.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 11.02.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.02.2021թ.-ին:

2. ՀՀ կադաստրի կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ կադաստրի կոմիտեն 20.01.2021թ. թիվ ԱԹ/383-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները՝ ներկայացրել «Ալպեսա» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. «Ալպեսա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 02.02.2021թ.-ին գրությամբ դիմել է «Ալպեսա» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1188-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է 11.02.2021թ.-ին հրավիրված նիստին, ներկայացրել է բանավոր դիրքորոշում՝ անդրադարձ կատարելով «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում «Ալպեսա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգի հիմքերին:

4. <u>ՍՑ-LO-2021/31 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կադաստրի կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) և «Ալպեսա» ՍՊԸ-ի միջև 16.10.2020թ.-ին կնքվել է թիվ «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ նաև՝ Պայմանագիր):

ii. Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ դեկտեմբերի 10-ը ներառյալ:

iii. Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքված պայմանագրի հաշվառման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

iv. ՀՀ կադաստրի կոմիտեի և «Ալպեսա» ՍՊԸ-ի միջև 20.10.2020թ.-ին կնքվել է թիվ «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07» ծածկագրով պետական գնման պայմանագրի վճարման ժամանակացույցը հաստատելու մասին թիվ 1 համաձայնագիրը (այսուհետ նաև՝ Համաձայնագիր):

v. Մասնակիցը 02.12.2020թ.-ին Պատվիրատուին ուղղված թիվ Կ1/2 գրությամբ հայտնել է, որ Կադաստրի կոմիտեի Նոր Նորքի 5-րդ զանգվածի Նիկոյան 7 հասցեում գտնվող մասնաշենքի ընթացիկ նորոգման աշխատանքների ընթացքում ի հայտ են եկել նոր ծավալներ սերվերի սենյակի հատակի ամրանավորում, բետոնե հարթակի ամրանավորում և այլև, որոնք փոխկապակցված են պայմանագրով նախատեսված աշխատանքներին: Պատվիրատուի կողմից առաջարկվել է դադարեցնել հողանցման կոնտուրի կառուցման աշխատանքները (հողային աշխատանքները կատարվել են (3x3x1.8) 16 մ3) մինչև կքննարկվեն և կներկայացվեն դրա սխեմատիկ լուծումներն ու տեղը, առաջ է քաշվել նաև սենյակների հատակների կերամոգրանիտե սալերի փոխարեն տեղադրել պրեսգրանիտե սալեր, հոսանքի հաղորդալարերի համարն անցկացնել տուփերի միջով: Հաշվի առնելով նշվածը՝ խնդրել Պատվիրատուին՝ վերջինիս հանձնարարականը համապատասխան ստորաբաժանումներին տրամադրել անհրաժեշտ սխեմաններն ու ծավալաթերը, ինչպես նաև 2020թ.-ի հոկտեմբերի 16-ին կնքված թիվ «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07» պայմանագրով սահմանված աշխատանքների ավարտման ժամկետը երկարացնել մինչև 2020թ.-ի դեկտեմբերի 25-ը:

vi. Պատվիրատուն 17.12.2020թ.-ին Մասնակցին ուղղված թիվ ԱԹ/7285-2020 գրությամբ հայտնել է, որ «Ալպեսա» ՍՊԸ-ի և Կադաստրի կոմիտեի միջև 16.10.2020թ.-ին կնքված՝ «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման» պետական գնման թիվ «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07» պայմանագրով ստանձնած պարտավորությունները, այն է՝ սույն թվականի հոկտեմբերի 10-ին լրացել է պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետը: Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետով սահմանված կարգը՝ Պատվիրատուն, հայտնել է նաև, որ կարող է միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրել է թիվ «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07» պայմանագրով ստանձնած պարտավորությունները կատարել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 20-ը:

vii. Մասնակիցը 24.12.2020թ.-ին Պատվիրատուին ուղղված թիվ Կ1/5 գրությամբ հայտնել է, որ Կադաստրի կոմիտեի Նոր Նորքի 5-րդ դանդվածի Նիկոյան 7 հասցեում գտնվող մասնաշենքի ընթացիկ նորոգման աշխատանքների ընթացքում ի հայտ եկած նոր ծավալների պատճառով կատարվել են հւսմապատասխան հաշվարկներ և կազմվել է համադրմւսն ակտ: Տեղեկացրել է. որ համադրում կատարելու ընթացքում «հրդեհային ազդարարում» բաժինն ամբողջությամբ հանվել է ծավալաթերթով նախատեսված աշխատանքների ցանկից:

viii. Մասնակիցը նույն օրը Պատվիրատուին ուղղված մեկ այլ թիվ Կ1/6 գրությամբ հայտնել է նաև, որ կողմերի միջև 2020թ.-ի հոկտեմբերի 16-ին կնքված Պայմանագրի շրջանակում շինարարական աշխատանքների ընթացքում ի հայտ են եկել աշխատանքների լրացուցիչ ծավալներ, որոնք փոխկապակցված են ծավալաթերթում արտացոլված աշխատանքների հետ, սակայն Պատվիրատուն մինչ օրս չի արձագանքել թիվ Կ1/2 նամակին: Պատվիրատուի կողմից, ինչպես նաև տեխնիկական հսկողություն իրականացնող անձի կողմից Կատարողին տրվել են Պայմանագրի անբաժանելի մաս կազմող հավելված 1 ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքներից բացի լրացուցիչ աշխատանքների պատվերներ, որոնք կատարվել են, սակայն կատարված լրացուցիչ աշխատանքների արդյունքում Կատարողը հնարավորություն չի ունեցել տեղավորվել պայմանագրով նախատեսված ժամկետի մեջ: Հավելել է նաև, որ Պատվիրատուին ուղղված նամակում տեղ գտած լրացուցիչ աշխատանքները բանավոր հանձնարարված են եղել ՀՀ կադաստրի կոմիտեի և տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության ներկայացուցիչների կողմից, սակայն դրանց վճարման վերաբերյալ ոչինչ չի ներկայացվել: Հաշի առնելով պայմանագրի ավարտի ժամկետը՝ Մասնակցի կողմից կատարվել են համապատասխան աշխատանքներ, և կազմվել է համադրման /հաստատված նախագծային կազմակերպության կողմից/ և կատարողական ակտեր, որոնք ներկայացվել են Կոմիտեին՝ հաստատման:

Նույն գրությամբ Մասնակիցը Պատվիրատուին հայտնել է, որ չի առարկում պայմանագիրը լուծելու առաջարկին: Սակայն տեղեկացնում է, որ կատարված աշխատանքների ծավալը կազմում է Պայմանագրի մաս կազմող ծավալաթերթ-նախահաշվով սահմանվածի 60 տոկոսը, որի արժեքը կազմում է մոտ 11,5 մլն. ՀՀ դրամ, իսկ Պատվիրատուի կողմից մինչ օրս վճարվել է ընդամենը 3,3 մլն. ՀՀ դրամ:

Միաժամանակ տեղեկացրել է, որ Պայմանագրի ժամկետը երկարաձգելու և լրացուցիչ հանձնարարականների համար լրացուցիչ վճարում կատարելու դեպքում Մասնակիցը պատրաստակամ է շարունակել շինարարական աշխատանքները և դրանք ավարտել կողմերի համաձայնությամբ որոշվող ժամկետում: Առաջարկել է քննարկել ստեղծված իրավիճակն ու գտնել հարցի լուծման տարբերակները:

ix. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման կողմից 30.12.2020թ.-ին կազմվել է Պայմանագրի վերաբերյալ եզրակացություն (Եզրակացություն), համաձայն որի՝ ՀՀ կադաստրի կոմիտեի և «Ալպեսա» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման»

պետական գնման թիվ «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07» պայմանագրով սահմանված կարգով՝ Պայմանագրի կողմ հանդիսացող Կապալառուն ստանձնել էր պարտավորություն կատարել ընթացիկ նորոգման աշխատանքներ Նոր Նորքի 5-րդ զանգվածի Միկոյան 7 հասցեում գտնվող մասնաշենքում մինչև 2020 թվականի դեկտեմբերի 10-ը ընկած ժամանակահատվածը, սակայն մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ն այդ աշխատանքները դեռ ավարտին հասցված չեն: Հարկ է նշել, որ Կապալառուի կողմից կատարվել են մասնակի աշխատանքներ, որոնց համար Պատվիրատուն Պայմանագրով սահմանված կարգով կատարել է վճարում 2 փուլով՝ համաձայն ներկայացված կատարողական ակտերի: Միաժամանակ հայտնել են, որ Կոմիտեի 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ ԱԹ/7285-2020 գրությամբ (կցվում է) Կապալառուն տեղեկացվել է, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել և պահանջել հատուցել պատճառված վնասները համաձայն Պայմանագրի 3-րդ կետի 3.1.4 ենթակետի «ա» մասով, եթե Կապալառուն աշխատանքը կատարում է դանդաղ, որի պատճառով դրա ժամանակին ավարտը դառնում է անհնար և «բ» մասով, եթե Կապալառուն խախտել է Պայմանագրով նախատեսված ժամկետը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկվել է հանձնարարել համապատասխան ստորաբաժանմանը լուծել Կապալառուի հետ կնքված Պայմանագիրը, պայմանավորված շինարարության ժամկետի, ինչպես նաև բյուջետային տարվա ավարտով:

x. Պատվիրատուն 30.12.2020թ.-ին Մասնակցին ուղղված թիվ ԱԹ/7582-20 գրությամբ, ի պատասխան Մասնակցի 2020 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ Կ1/5 և թիվ Կ1/6 գրությունների, հայտնել է, որ ՀՀ Կադաստրի կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) 2020 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ ԱԹ/7285-2020 գրությամբ նախկինում տեղեկացվել էր, որ Պատվիրատուի և Մասնակցի միջև 2020 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված՝ «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման» պետական գնման թիվ «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07» պայմանագրով նախատեսված Նոր Նորքի 5-րդ զանգվածի Միկոյան 7 հասցեում գտնվող մասնաշենքի ընթացիկ նորոգման աշխատանքների շրջանակում Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ժամկետը ավարտվել է 2020 թվականի դեկտեմբերի 10-ին: Մասնակիցը, հիշյալ գրությամբ տեղեկացվել էր նաև, որ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները՝ համաձայն Պայմանագրի 3.1.4 կետի «ա» (Կապալառուն աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը

դառնում է ակնհայտ անհնար) և «բ» (Կապալառուն խախտել է Պայմանագրով նախատեսված ժամկետը) ենթակետերի:

Ինչ վերաբերում է շենքի ընթացիկ նորոգման աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ եկած ծավալների արդյունքում կազմված համադրման թիվ 1 ակտով «Հրդեհային ազդարարում» բաժինը ամբողջությամբ ծավալաթերթ-նախահաշվից Մասնակցի նախաձեռնությամբ հանելուն, ապա տեղեկացրել են, որ դրա արդյունքում հիշյալ աշխատանքներն օբյեկտիվորեն տեղափոխվում են 2021 թվականի ժամանակահատված:

Անդրադառնալով թիվ Կ1/6 գրությամբ բարձրացված վճարման հարցին՝ Պատվիրատուն տեղեկացրել է, որ 2020 թվականի դեկտեմբերի 25-ի դրությամբ Կոմիտեի կողմից «Ալպեսա» ՍՊԸ-ին է փոխանցվել ընդհանուր առմամբ 11.548.690 (տասնմեկ միլիոն հինգ հարյուր քառասունութ հազար վեց հարյուր իննսուն) ՀՀ դրամ գումար: Իսկ ինչ վերաբերում է հիշյալ գրությամբ նշված՝ Պատվիրատուի կողմից առաջարկված լրացուցիչ աշխատանքներին, որոնք ենթադրաբար հանգեցրել են Պայմանագրի Հավելված 2-ում նշված օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների տեխնոլոգիական գործընթացների երկարացմանը և որոնք խոչընդոտ են հանդիսացել աշխատանքների զուգահեռ իրականացմանը, ապա տեղեկացրել են, որ այդ կապակցությամբ Մասնակցի կողմից չեն ներկայացվել հիմնավոր ապացույցներ և(կամ) փաստեր:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Պայմանագրի 3.1.4 կետի «ա» և «բ» ենթակետերով՝ Պատվիրատուն հայտնել է, որ միակողմանի լուծում է 2020 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված՝ «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման» պետական գնման թիվ «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07» պայմանագիրը:

xi. www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.01.2021թ.-ին հրապարակված Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ կադաստրի կոմիտեի և «Ալպեսա» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված թիվ «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07» պայմանագրով Մասնակիցը պարտավոր էր ստանձնած պարտավորությունները կատարել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 10-ը: Աշխատանքների կատարման ժամկետը լրանալուց հետո Կապալառուին տրվել էր հնարավորություն ստանձնած պարտավորությունները կատարել մինչև դեկտեմբերի 20-ը, սակայն աշխատանքները չեն ավարտվել նշված ժամկետում:

Հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետով սահմանված կարգը՝ Պատվիրատուն միակողմանիորեն (Կապալառուի կողմից չկատարած աշխատանքի մասով) լուծել է պայմանագիրը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1188-2021 գրությամբ «Ալպեսա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասի համաձայն՝ եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին: Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների,

աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված Կադաստրի կոմիտեի Նոր Նորքի 5-րդ զանգված Նիկոյան 7 հասցեում գտնվող մասնաշենքի ընթացիկ նորոգման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

Պայմանագրի 1.3 կետի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ դեկտեմբերի 10-ը ներառյալ: Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

Պայմանագրի 3.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի՝ չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

Պայմանագրի 3.1.4 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի

շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ կադաստրի կոմիտեի և «Ալպեսա» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի հոկտեմբերի 16-ին կնքված թիվ «ԿԿ-ԳՀԱՇՁԲ-20/07» պայմանագրով Մասնակիցը պարտավոր էր ստանձնած պարտավորությունները կատարել մինչև 2020 թվականի դեկտեմբերի 10-ը: Աշխատանքների կատարման ժամկետը լրանալուց հետո Կապալառուին տրվել էր հնարավորություն ստանձնած պարտավորությունները կատարել մինչև դեկտեմբերի 20-ը, սակայն աշխատանքները չեն ավարտվել նշված ժամկետում, ինչով պայմանավորված Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետի «բ» ենթակետի դրույթները, 30.12.2020թ.-ին միակողմանի (Մասնակցի կողմից չկատարած աշխատանքի մասով) լուծել պայմանագիրը՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.01.2021թ.-ին հրապարակելով Պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ, տվյալ դեպքում, «Ալպեսա» ՍՊԸ-ի կողմից դրսևորած անգործության արդյունքում, Պատվիրատուն, հիմք ընդունելով Պայմանագրի դրույթները, 30.12.2020թ.-ին միակողմանի լուծել է այն՝ www.gnumner.am համացանցային կայքում՝ «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում 25.01.2021թ.-ին հրապարակելով պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցումը:

Բողոքներ քննող անձը հավելում է նաև, որ ստանձնած պարտավորությունների (այդ թվում՝ ընթացակարգի և պայմանագրի) խախտման հիմքերը պայմանականորեն կարելի է

բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ: Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները: Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է ստանձնած պարտավորությունների կատարումը:

Վերոգրյալի հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ բոլոր դեպքերում էլ, բացի ֆորսմաժորային իրավիճակներից, ստանձնած պարտավորությունների խախտման համար մեղքի բացակայության փաստը հաստատված համարելու համար ընդհանուր կանոնն այն է, որ անձը պարտավոր է ապացուցել, որ օրենքով սահմանված պարտավորությունների կատարման համար անհրաժեշտ ժամկետի ընթացքում ձեռնարկել է իրենից կախված ողջամիտ ու բավարար միջոցներ այդ պարտավորությունների պատշաճ կատարումը իրականացնելու ուղղությամբ, սակայն իր կամքից անկախ պատճառներով խախտել է գնման ընթացակարգով կամ պայմանագրով ստանձնած պարտավորությունը (ները): Օբյեկտիվ և սուբյեկտիվ հիմքերի վերաբերյալ նմանատիպ դիրքորոշում է հայտնել ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացրած որոշումներում *(տե՛ս, «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ-ն ընդդեմ «Միլլար» ՍՊԸ-ի թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 03.12.2014 թվականի որոշումը)*:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման, դրանք համադրելով Մասնակցի ներկայացրած դիրքորոշման հանգամանքներին, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով, Մասնակցի կողմից Պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Պատվիրատուին Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետներում աշխատանքների կատարումը եղել է հնարավոր, քանի որ Մասնակիցը Պայմանագրով ստանձնած պարտավորությունները պետք է կատարեր մինչև 10.12.2020թ.-ը, իսկ արդեն Պատվիրատու գրության հիման վրա՝ մինչև 20.12.2020թ.-ը, ուստի այդ պարտավորությունների չկատարումը չի կարող պայմանավորված լինել արտակարգ և անկանխելի, այսինքն՝ այնպիսի բացառիկ, անսովոր, եզակի հանգամանքների ի հայտ գալով, որոնք հաղթահարելը տվյալ պարագայում օբյեկտիվորեն անհնարին է:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նաև փաստել, որ Պայմանագրի 8.8 կետով սահմանված աշխատանքի կատարման ժամկետի երկարաձգման պայմանը Պատվիրատուի իրավունքն է, այլ ոչ թե պարտականությունը, ինչպես այն սահմանված է՝

աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

Ինչպես նաև Մասնակիցը զրկված չէր և կարող էր մինչև Պայմանագրի լուծման մասին ծանուցումը www.gnumner.am կայքում հրապարակվելը՝ 25.01.2021թ.-ը, կատարել Պայմանագրով նախատեսված աշխատանքները, որը չի կատարել:

Անդրադառնալով Մասնակցի կողմից Ընթացակարգի քննության ընթացքում ներկայացված մյուս փաստարկներին, որոնք վերաբերում են աշխատանքների իրականացման փաստացի ծավալներին՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ դրանց վերաբերյալ Մասնակցի կողմից գործի քննության ընթացքում չներկայացվեցին համապատասխան վերաբերելի ու թույլատրելի ապացույցներ, որոնց ուսումասիրության արդյունքում հնարավոր կլիներ փաստել՝ Մասնակցի կողմից իր ստանձնած պարտավորությունների ոչ պատշաճ կատարման մեղքի բացակայությունը և այն որ սահմանված աշխատանքները հնարավոր չի եղել կատարել ժամկետում՝ Պատվիրատուի դրևորած գործողությունների կամ անգործության հետևանքով:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա գրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 33-րդ կետի 17-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Նշված իրավանորմերի վերլուծության հիման վրա, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ Օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվել: Այսինքն՝ միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Ալպեսա» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված և դրա շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Ուստի, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի դրույթները, Մասնակցին պետք է ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 01.02.2021թ.-ի թիվ 26/26/1188-2021 գրությամբ «Ալպեսա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/31 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Ալպեսա» ՍՊԸ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**